ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 79-Ա
21 ՀՈՒՆԻՍ 2021Թ
ՄԱՐՈ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 29-րդ հոդվածի 7-րդ մասով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N224-Ն որոշմամբ հաստատված «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը» N 1 հավելվածի 11.3-րդ կետով և Մարո Սիմոնյանի հետ կնքած 2019 թվականի սեպտեմբերի 5-ի N423 ժամկետային աշխատանքային պայմանագրի 6-րդ բաժնի ա/ենթակետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2021 թվականի հունիսի 21-ից ՀՀ Վայոց ձորի մարզի «Եղեգնաձորի երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մարո Սիմոնյանին ազատել զբաղեցրած պաշտոնից, լուծել նրա հետ կնքած 2019 թվականի սեպտեմբերի 5-ի N 423 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:
2. ՀՀ Վայոց ձորի մարզի «Եղեգնաձորի երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել դպրոցի ուսումնական գծով տեղակալ Մարինե Մանուկյանի վրա:

3. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություններին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել հանձնման-ընդունման աշխատանքները:

6/23/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ